Փետրվարի 28-ին և 29-ին Իկենոբո դպրոցի սոկատոկու պրոֆեսոր տիկին Միդորի Յամադան անցկացրել է ճապոնական ավանդական մշակույթը ներկայացնող միջոցառում

Փետրվարի 28-ին (ուրբ) և 29-ին (շաբ) ՀՀ-ում Ճապոնիայի դեսպանությունը կազմակերպել է թեյախմության արարողության և սումի-էի (ճապոնական թանաքով գեղանկարչություն) ցուցադրություն և վարպետության դաս, որն անցկացրել են Իկենոբո դպրոցի սոկատոկու պրոֆեսոր, սումի-էի և թեյախմության վարպետ տիկին Միդորի Յամադան և դասախոս տիկին Գալինա Դավիդենկոն (երկուսն էլ բնակվում են Մոսկվայում):

Միջոցառումներն անցկացվել են հայ-ճապոնական «Հիկարի» գիտակրթամշակութային կենտրոնի, ինչպես նաև «Իրոհա» հայ-ճապոնական կրթական և մշակութային փոխանակման կենտրոնի հետ համատեղ Երևանի գեղարվեստի պետական ակադեմիայում, «Երևան իմ սեր» հիմնադրամում և Էջմիածնի Ռուբեն Սևակի անվան թանգարանում:

Միջոցառմանը մասնակցել են շատ մարդիկ, այդ թվում՝ արվեստ ուսումնասիրող աշակերտներ և ուսանողներ, և այն հիասքանչ հնարավորություն է ընձեռել մասնակիցներին առնչվելու ճապոնական ավանդական մշակույթին:

Սումի-էի ցուցադրություն և վարպետության դաս Երևանի գեղարվեստի պետական ակադեմիայում

Միջոցառման բացման արարողությունը «Երևան իմ սեր» հիմնադրամում

Սումի-էի ցուցադրություն և վարպետության դաս «Երևան իմ սեր» հիմնադրամում

Թեյախմության արարողության ցուցադրություն և վարպետության դաս
«Երևան իմ սեր» հիմնադրամում

Միջոցառման բացման արարողությունը Էջմիածնի Ռուբեն Սևակի անվան
թանգարանում

Թեյախմության արարողության ցուցադրություն և վարպետության դաս
Էջմիածնի Ռուբեն Սևակի անվան թանգարանում

Սումի-էի ցուցադրություն և վարպետության դաս Էջմիածնի Ռուբեն Սևակի անվան թանգարանում